

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՈՒԱՍՏԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Հեպատիտ Բ-ի պատուաստ

Դուք ի՞նչ պետք է իմանաք:

Many Vaccine Information Statements are available in Spanish and other languages. See www.immunize.org/vis.
Պատուաստի վերաբերյալ բազմաթիվ լայտարարություններ կան սպաներենով և այլ լեզուներով:
Տե՛ս՝ www.immunize.org/vis.

1 Ի՞նչ է հեպատիտ Բ-ն:

Հեպատիտ Բ-ն լուրջ վարակ է, որ կ' ազդի լեարդի վրա: Այդ հիւանդությունը կը յառաջանայ հեպատիտ Բ-ի ժահրէն:

- 2009-ին մօտաւորապէս 38,000 մարդ վարակուեցան հեպատիտ Բ-ով:
- Ամէն տարի Միացեալ Նահանգներուն մէջ մօտաւորապէս 2,000-4,000 մարդ կը մահանայ հեպատիտ Բ-էն յառաջացած սիրողէն (կարծրացում) կամ լեարդի քաղցկեղէն:

Հեպատիտ Բ-ի պատճառով վարակակիրը կրնայ հիւանդանալ.

սուր (կարճատեւ) հիւանդութիւններով: Այն կրնայ պատճառել.

- ախորժակի կորուստ
- փորհարություն և փսխում
- յոզնութիւն
- դեղնախտ (դեղին մորթ կամ աչք)
- ցաւ մկաններու, յօդերու և ստամոքսի մէջ

Սուր հիւանդութիւնը ախտանիշներուն հետ , աւելի տարածուն է չափահաս անձերու մօտ: Մանուկները, որոնք վարակուած են, ընդհանրապէս ախտանշաններ չունին:

Քրոնիկական (երկարատեւ) ախտահարում: Որոշ մարդիկ քրոնիկական հեպատիտ Բ կը զարգացնեն: Շատեր ախտանշաններ չունին, բայց վարակը արդէն իսկ շատ լուրջ է և կրնայ զուգակցուիլ հետեւեալ հիւանդութիւններով.

- լեարդի փաստածք (սիրոզ)
- լեարդի քաղցկեղ
- մահ

Քրոնիկ վարակը պզտիկներուն և մանուկներուն մօտ առաւել տարածուն է քան չափահաս անձերու մօտ: Մարդիկ, որոնք քրոնիկ հիւանդներ են, կրնան հեպատիտ Բ-ի ժահրը տարածել այլ անձերու, եթէ նոյնիսկ այդ անձերը հիւանդ չեն: Միացեալ Նահանգներուն մէջ քրոնիկ հեպատիտ Բ-ով կրնան վարակուած ըլլալ մինչեւ իսկ 1.4 միլիոն մարդ:

Հեպատիտ Բ-ի ժահրը դիւրութեամբ կը տարածուի վարակուած անձի արեան կամ մարմնին ուրիշ հեղուկներուն հետ հաղորդակցութեամբ: Մարդիկ կրնան վարակուիլ նաեւ աղտոտ առարկայի մը հետ հաղորդակցութեամբ, ուր ժահրը կրնայ ապրիլ մինչեւ եօթը օր:

- Մաղմը , որուն մայրը վարակուած է , կրնայ այդ վարակով աշխարհ գալ,
- Պզտիկներ, պատանիներ և չափահաս անձեր կրնան վարակուիլ
 - արեան կամ մարմնին ուրիշ հեղուկներուն հետ հաղորդակցութեամբ խայթածքներու, կտրուածքներու կամ վերքերու միջոցով.
 - շփումով այնպիսի առարկաներու հետ , որոնք արիւն ունին կամ մարմնի հեղուկներ և բուժման սարքեր նախատեսուած շաքարախտի համար,
 - ունենալ չպաշտպանուած սեռային յարաբերութիւն վարակուած անձի մը հետ,
 - ասեղներու համատեղ օգտագործում, երբ թմրադեղ կ' ընդունին,
 - օգտագործուած ասեղով ներարկում:

2 Հեպատիտ Բ-ի պատուաստը: Ինչու՞ պետք է պատուաստուիլ:

Հեպատիտ Բ-ի պատուաստը կրնայ կանխել լեարդաբորբը, եւ հեպատիտ Բ-ի վարակի լուրջ հետեւանքները, ներառեալ լեարդի քաղցկեղը և սիրոզը (լեարդի կարծրացումը):

Հեպատիտ Բ-ի պատուաստը կարելի է կատարել առանձին կամ նոյն ներարկումով ուրիշ պատուաստներու հետ:

1982-ին Միացեալ Նահանգներու մէջ Հեպատիտ Բ-ի պատուաստը յանձնարարելի էր երախաներու և չափահասներու որոշեալ խումբի մը իսկ 1991էն ի վեր բոլոր երեխաներուն: 1990էն սկսեալ Հեպատիտ Բ-ի վարակները երեխաներու ու պատանիներու մօտ պակսեցան 95 տոկոսով: Այդ համեմատութիւնը այլ տարիքային խումբերու համար 75 տոկոս էր:

Պատուաստը կու տայ երկարաժամկետ պաշտպանութիւն հեպատիտ Բ-ի վարակէն, հավանական է նոյնիսկ մինչեւ մահ:

3 Ո՞վ պետք է ստանայ հեպատիտ Բ պատուաստը և ե՞րբ:

Մանուկներ և պատանիներ

- Մանուկները սովորաբար կը ստանան երեք դեղաբաժին հեպատիտ Բ պատուաստ:

- 1-ին դեղաբաժին՝ ծնունդէն անմիջապէս վերջ
- 2-րդ դեղաբաժին՝ 1-2 ամսականին
- 3-րդ դեղաբաժին՝ 6-18 ամսականին

Որոշ մանուկները կրնան չորս դեղաբաժին ստանալ, օրինակ եթէ օգտագործուի հեպատիտ Բ պարունակող պատուաստի միացութիւն: (Ասիկա միակ ներարկում մըն է, որ կը պարունակէ քանի մը պատուաստներ:) Լրացուցիչ չափաբաժինը փաստակար չէ:

- Տասնութ տարին չբոլորած անձեր, որոնք մանուկ տարիքին չեն ստացած պատուաստը, նաեւ պետք է պատուաստուին:

Չափահասներ

- Բոլոր այն անձերը, որոնք հեպատիտ Բ-ով չեն պատուաստուած և վտանգի տակ են, պետք է պատուաստուին: Ասիկա կը ներառի.
 - հեպատիտ Բ-ով վարակուած սեռական զուգընկերներներուն,
 - այրերու որոնք սեռական յարաբերութիւն կ'ունենան մէկ այլ տղամարդու հետ,
 - անձերու, որոնք կը ներարկեն թմրեցուցիչներ,
 - մարդոց, որոնք կ'ունենան մէկէ աւելի սեռային զուգընկեր,
 - լեարդի կամ երիկամի քրոնիկ հիվանդութեամբ մարդոց,
 - մինչեւ վաթսուն տարեկան շաքարախտով հիւանդ մարդոց,
 - մարդկային արեան կամ ուրիշ մարմնի հեղուկին հետ գործ ունեցող մարդոց.



- Տան մեջ հեպատիտ Բ-ով վարակուած մարդոց հետ շփուող անձերուն,
- մշտաբնակներուն եւ յենարան հիմնարկութիւններուն զարգացող հաշմանդամներուն համար,
- երկկամի դիալիզով հիւանդներուն,
- մարդոց, որոնք ճամբորդած են դէպի երկիրներ, ուր հեպատիտ Բ-ն տարածուն է
- ՄԻԱՎԷ վարակուած մարդոց:

- Բժիշկներ կրնան այլ մարդոց խրախուսել որ հեպատիտ Բ-ի պատուաստ ստանան. օրինակ չափահաս վաթսուն եւ ասելի տարեկան շաքարախտով հիւանդ անձեր: Ուրիշ ով որ կուզէ պաշտպանուած ըլլալ հեպատիտ Բ-ի վարակէն, կրնայ պատուաստ ստանալ:
- Յղիները, որոնք վտանգի տակ են վերոյիշեալ պատճառներուն մէկուն պատճառով, պէտք է պատուաստուին: Ուրիշ յղիներ, որ կը ցանկանան պաշտպանուիլ, կրնան պատուաստուիլ:

Չափահաս անձեր, որոնք կը ստանան հեպատիտ Բ պատուաստը, պէտք է ստանան երեք դեղաբաժին երկրորդ դեղաբաժին մը պիտի ստանայ առաջինէն 4 շաբաթ յետոյ, եւ երրորդ դեղաբաժին մը երկրորդէն 5 ամիս վերջ: Ձեր բժիշկը կրնայ ձեզ ըսել ուրիշ դեղաբաժին ծրագրի մը մասին, որ որոշակի հանգամանքներուն մէջ օգտագործելի է:

4 **Ո՞վքեր պէտք չէ ստանան հեպատիտ Բ պատուաստ:**

- Անոնք, որոնք ունին թթխմորէն կամ պատուաստուկի որեւէ ուրիշ բաղադրիչի կողմէ կեանքին սպառնացող պէտք, պէտք չէ ստանան հեպատիտ Բ պատուաստ: Ձեր բժիշկին պատմէք, եթէ որեւէ խիստ պէտքի ունիք:
- Անոնք, որոնք ունին կեանքին սպառնացող պէտքի հակազդեցութիւն նախորդ հեպատիտ Բ-ի դեղաբաժինի պատուաստէն, պէտք չէ ստանան մէկ այլ դեղաբաժին:
- Անոնք, որոնք թէթեւ կամ ծանր հիւանդ են պատուաստի առաջին դեղաբաժինը ստանալէ առաջ, պատուաստի ներարկումէն առաջ պէտք է կատարեալ ապաքինին:

Ձեր բժիշկը կրնայ ձեզ յանդէպ տեղեկութիւն տալ այս զգուշացումներու մասին:

Շանթագրութիւն. հավանական է, որ ձեզմէ խնդրեն քսանութ օր սպասիլ, նախքան արիւն կը նուիրաբերէք հեպատիտ Բ պատուաստ ստանալէն յետոյ: Ասիկա պէտք է, որովհետեւ թեստը կրնայ ճիշդ չըլլալ պատուաստի եւ արիւնի հոսքին (որ վարակիչ չէ) եւ հեպատիտ Բ-ի վարակին հետ:

5 **Ի՞նչ վտանգ կը ստեղծէ հեպատիտ Բ պատուաստը:**

Հեպատիտ Բ-ն շատ ապահով պատուաստ է: Շատ մարդիկ ընդհանրապէս խնդիրներ չունին անոր հետ: Պատուաստը կը պարունակէ ոչ-վարակիչ նիւթ եւ չի կրնար պատճառ ըլլալ հեպատիտ Բ վարակներու:

Ինչ-որ մեղմ խնդիրներու մասին զեկուցած են:

- Չորսէն մէկուն մօտ կրնայ վերք յառաջանալ ներարկումի տեղոյն վրայ:
- 99.9°F կամ բարձր ջերմութիւն (մօտաւորապէս տասներեքիցէն մէկուն մօտ):

Լուրջ խնդիրներ չափազանց հազուադէպ են: Սուր պէտքեր հակազդեցութիւններ կը պատահին անգամ մը 1.1 միլիոն չափաբաժինի մէջ:

Պատուաստը, իրաքանչիւր դեղին պէս, կրնայ լուրջ հակազդեցութիւններ յառաջացնել: Բայց վտանգ մը, որ պատուաստը կրնայ յառաջացնել լուրջ հետեւանք կամ DCH-0450A

մահ, քիչ հաւանական է: Աւելի քան 100 անձեր Միացեալ Նահանգներուն մէջ պատուաստուած են հեպատիտ Բ պատուաստով:

6 **Ի՞նչ է եթէ կայ զսպուած կամ սուր հակազդեցութիւն:**

- Ես ի՞նչ պէտք է փնտռեմ:
- Ցանկացած ոչ-սովորական վիճակ, ինչպիսիք են բարձր ջերմութիւնը կամ ոչ-սովորական վարքը: Ծանր զգայութեան հակազդեցութեան նշանները կրնան ներառել շնչելու դժուրութիւն, խոպոտութիւն կամ խզխզոցով ծանր շնչառութիւն, եղնջատներ, թուլութիւն, սրտի արագ բարախում կամ գլխապտոյտ:

- Ես ի՞նչ պէտք է ընեմ:
- Բժիշկ կանչեցէք թէ կամ հիւանդը անմիջապէս բժիշկի տարէք:

- Ձեր բժիշկին պատմեցէք, թէ ի՞նչ պատահած է, նշեցէ՛ք ամիսը, ժամը եւ այն, թէ ե՞րբ տրուած է պատուաստը:

- Ձեր բժիշկէն խնդրեցէք որ հակազդեցութեան մասին խօսի տեղեկացնելով պատուաստի բացասական դէպքերու զեկուցման համակարգի (VAERS) ձեռնարկը: Կամ դուք կրնաք այս զեկուցող ներկայացնել VAERS-ի կայքէջի միջոցաւ www.vaers.hhs.gov կամ հեռաձայնել հետեւեալ թիւով **1-800-822-7967** :

VAERS բժշկական խորհրդատուութիւն չի տրամադրէր:

7 **Պատուաստէն ստացած փաստաւածքի փոխհատուցման ազգային ծրագիրը**


Պատուաստէն ստացած փաստաւածքի փոխհատուցման ազգային ծրագիրը (VICP) ստեղծուեցաւ 1986-ին:

Մարդիկ, որոնք վստահ են, որ իրենք փաստաւած են պատուաստի պատճառով, ծրագրի մասին կրնան տեղեկանալ եւ հայց ներկայացնել հեռաձայնելով հետեւեալ թիւով **1-800-338-2382**, կամ այցելել հետեւեալ կայքէջը www.hrsa.gov/vaccinecompensation

8 **Ի՞նչպէս կրնամ աւելին իմանալ:**

- Հարցուցէ՛ք ձեր բժիշկին: Անոնք կրնան ձեզի տալ փաթեթին ներդիրը կամ առաջարկել տեղեկատուութեան այլ աղբիւրներ:
- Հեռաձայնեցէ՛ք ձեր տեղական կամ նահանգային առողջապահութեան վարչութիւն: **1-888-767-4687**
- Կայի մէջ եղէք հիւանդութեան վերահսկման եւ կանխարգիլման կեդրոնի (CDC) հետ.
 - Հեռաձայնեցէ՛ք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** թիւով
 - Այցելեցէ՛ք CDC-ի կայքէջը՝ www.cdc.gov/vaccines

Vaccine Information Statement (Interim)
Hepatitis B Vaccine
 Armenian
 2/2/2012
 42 U.S.C. § 300aa-26
 Translation provided by the California Department of Public Health
 AUTH: P.H.S., Act 42, Sect. 2126.



Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպէսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: